## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovunigjuxapetaran@mail.ru

### ՈՐՈՇՈՒՄ

«**02**» հունիսի 2014 թվականի No 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին որոշում է հաստատել համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 2-ի №8 արտահերթ նիստի օրակարգը.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 07-029-0034-0051 ծածկագրի տակ գտնվող հողատարածքը և շինությունները ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի գյուղական համայնքի համայնքային սեփականություն համարվող ծառայողական ավտոմեքենան աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու և նոր ծառայողական ավտոմեքենա ձեռք բերելու մասին:

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Հրաչյա Ավետիսյան
Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արթուր Նավասարդյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Հայկ Մուշեղյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovunigjuxapetaran@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«**02**» հունիսի 2014 թվականի No 29

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 07-029-0034-0051 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող 38 փողոց 3-4/2 հասցեում գտնվող 07-029-0034-0051 ծածկագրի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.00703հա հողատարածքը և շինությունները՝ 33.15քմ ընդհանուր մակերեսով օժանդակ շինությունը և 2.5քմ պարիսպը ուղղակի վաճառքի միջոցով օրենքով սահմանված կարգով վաճառել Կոմիտաս Հայրապետյանին:

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Հրաչյա Ավետիսյան
Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արթուր Նավասարդյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Հայկ Մուշեղյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovunigjuxapetaran@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«**02**» հունիսի 2014 թվականի No 30

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի և 50-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ գույքը աճուրդ-վաճառքի միջոցով օրենքով սահմանված կարգով օտարել և մեկնարկային գինը սահմանել 2 200 000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) դրամ, հիմք ընդունելով «ԱՐԺԵՔ» ՍՊԸ-ի կողմից գնահատումը:

| հ/հ | Անվանումը | Ավտոմեքենայի մակնիշը | Թողարկման տարեթիվը | Ավտոմեքենայի գույնը | Շարժիչի համարը | Ավտոմեքենայի թափքի համարը | Ավտոմեքենայի նույնացման համարը | Մեկնարկային գինը ՀՀ դրամ | սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ծառայողական ավտոմեքենա | Վազ 21214 | 2008 | Սպիտակ | 8660263 | 1872949 | XTA21214081872949 | 2 200 000 | չկան |

2. Համայնքի բյուջեի հաշվին օրենքով սահմանված կարգով ձեռք բերել ծառայողական ավտոմեքենա:

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Հրաչյա Ավետիսյան
Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արթուր Նավասարդյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Հայկ Մուշեղյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ